ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2012 թվականի **թիվ 191** քաղ. Մոսկվա

«Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 027/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը գործողության մեջ դնելու կարգի մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3–րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 027/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու ու կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոնները պարունակող ստանդարտների ցանկը (կցվում է):

2. Սահմանել՝

2.1. Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝

դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման առարկա հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ համապատասխանաբար՝ արտադրանք, Տեխնիկական կանոնակարգ) մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան մինչեւ 2015 թվականի փետրվարի 15-ը՝ բացառությամբ նախքան սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի, որոնք վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրում կամ ընդունում չի թույլատրվում:

2.2. Մինչեւ 2015 թվականի փետրվարի 15-ը թույլատրվում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան արտադրանքի արտադրությունն ու շրջանառության համար բաց թողնելը նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրվել կամ ընդունվել են նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Այդպիսի արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում:

2.3. Մինչեւ 2014 թվականի հունվարի 1-ը Մաքսային միության մաքսային տարածքում թույլատրվում է այն արտադրանքի արտադրությունն ու շրջանառության համար բաց թողնելը, որը նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը ենթակա չի եղել Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերի կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն համապատասխանության պարտադիր գնահատմանը (հավաստմանը)՝ առանց արտադրանքի համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի եւ առանց համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով) մակնշման:

2.4. Սույն Որոշման 2.1-րդ ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության համար բաց թողնված արտադրանքի, ինչպես նաեւ սույն Որոշման 2.3-րդ ենթակետում նշված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված՝ արտադրանքի պիտանիության ժամկետում:

2.5. Մինչեւ սննդամթերքի առանձին տեսակների մասին Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրը Տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու միջոցով ճշգրտման ենթակա են սննդամթերքի տեսակների անվանումները՝ այդպիսի տեխնիկական կանոնակարգերով սահմանված սահմանումներին համապատասխան:

3. Տեխնիկական կանոնակարգման հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Վ. Ն. Կորեշկովին՝ Կողմերի հետ համատեղ պատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը, եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում սահմանված կարգով այն ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի հաստատմանը:

4. Կողմերին՝

4.1. Նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը սահմանել պետական հսկողության (վերահսկողության) այն մարմինները, որոնք պատասխանատու են Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար, եւ դրա մասին տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային:

4.2. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն Որոշման 2-րդ կետը:

5. Ղազախական կողմին՝ ստանդարտների կիրառման արդյունքների դիտանցման հիման վրա՝ Կողմերի մասնակցությամբ ապահովել սույն Որոշման 1-ին կետում նշված ցանկի արդիականացման վերաբերյալ առաջարկներ նախապատրաստելը եւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ տարին մեկ անգամից ոչ պակաս դրանք Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նիստում քննարկման ներկայացնելը:

6. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուն օրացուցային օրը լրանալուց հետո:

Նախագահ՝ **Վ. Բ. Խրիստենկո**